

Ամբաս Բիւրաս

Կոնստանդնուպոլիս «Փիիհնիկ» Ի  
Աղիթսանգրիա



S. Burat  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՅՍԱՆ

Նր. 45  
ՏԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

Նր. 8  
ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՆՈՒԿ Է

ԿՈՎԿԱՍ  
ՏՂԵԿԱՆ ԲԱՂ. 6

# ՓԻԻՆԻԿ

ՇԱԲԱՐԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՉՈՐԵԲՇԱԲԹԻ 19 ՄԱՐՏ 1902

ԹԻԻ 43

## ԲԱՅ ՆԱՄԱԿ ԸՆՏՐՈՂՆԵՐՈՒՆ

Բարեկամ,

Եկեղեցիին պատին վրայ կախուած ցանկին մէջ անշուշտ տեսար ԲՈՒ ԱՆՈՒՆԻ. այդ կը նշանակէ որ դուն ալ ընտրող չ'ես, այսինքն իրաւունք ունիս քու քուէդ տալու նո՞ս թաղականներու ընտրութեան որ պիտի կատարուի այս Կիրակի:

Հոգ չէ՛ թէ Առաջնորդարանէն պաշտօնական նամակ ստանաս կամ ո՛չ, դուն ընտրելու իրաւունք ունիս. ուստի եթէ մոռացմամբ կամ ո կ է դիտում մով նամակ կ քուէթուղթ քու ձեռքդ չի հասցնեն, մի՛ կարծեր թէ ատով զրկուած կըլլաս քուէ տալու իրաւունքէդ. պարզ թղթի կտորի մը վրայ ալ քու քուէդ գրել կրնաս, միայն շանքըրէ՛ որ քու քուէդ դուն ինքդ բերես կիրակի օրը ու քու ձեռքովդ քուէտուփին մէջ ձգես. վասն զի քուէ տալու ամենէն օրինաւոր կ ասպանով կերպը այս է. խարդախութեան կասկած չի

մնար: Բայց եթէ ուէ բանաւոր պատճառով մը անձամբ քուէ բերելդ անկարելի է, գէթ բարեկամներէդ վրատահելի մէկու մը յանձնէ քուէդ՝ պահարանի մը մէջ փակելով կ անոր վրայ Ընտրող Ժողովոյ Արժ. Նախագահին հասցէն գրելով ու պահարանին ետեւի կողմն ալ ստորագրութիւնդ գրելով շեղակի՝ երկու ծայրերուն իրարու փակած տեղը: Չըլլայ որ քուէթուղթիդ վրայ ստորագրութիւն ղենես. եթէ այդպէս ընես, քուէդ կը փճանայ, չընդունուիր: Ընտրելիներդ եօթը հոգի պիտի ըլլան. միայն անոնց անունը կ մականունը պիտի գրես քուէթղթին վրայ. ուրիշ բան պիտի չգրես: Գիտցիր որ քուէ տալու ժամանակն է Կիրակի օրը առտուան 8 էն մինչև 1. ատկէ առաջ կամ վերջ տարուած քուէները կը մերժուին:

Բարեկամ, գիտե՞ս ընտրող ըլլալ ի՞նչ ըսել է. — ազգին գործերուն մէջ ձայն ունենալ ըսել է. ըսել է թէ դուն մեծերէ, իշխաններէ, աղաներէ կամ անխրաններէ չէ՛ որ կը կառավարուիս, այլ դուն քու տէրդ ես, ազատ ես,

ինքզինքդ կը կառավարես. Երկինքէն քու վրագ գլխաւոր դրուած մարդեր չիկան, այլ դուն քու գործերուդ վարչութիւնը ազատ ես յանձնելու քու ուզած մարդերուդ: Կամ ուրիշ խօսքով ազգը մէկ քանի անձերու գերին կամ անոնց հնազանդ ծառան չէ, այլ ինք իր տէրն է և ինքզինք կը կառավարէ: Չորս տարուան համար քու ազատ կամքով ազգին գործերը պիտի յանձնես քու յարմար դատած անձերուդ որ անոնք այդ գործերը արդարութեամբ կառավարեն, ու իրենք իրենց գործերուն համար ազգին՝ այսինքն մենէ ամէն մէկին առջև պատասխանատու են. իրենց գործերուն համարը, հաշիւը տալու պարտուկան են:

Թաղականը, երեսփոխանը ուրիշ բան չէ, ազգին պաշտօնեան է, ազգին կը ծառայէ. բայց ազգին ծառայելը նուատութիւն կամ անպատուութիւն չէ, ընդհակառակը շատ պատուաւոր բան է, գէշ բանը՝ ազգին վրայ բռնանալն է, ազգին գլխուն փորձանք դառնալն է:

Սահմանադրութիւնը հաստատուելէն ի վեր քառասուն տարի է արդէն, բայց դեռ ազգին մէջ կան մարդեր որ իրենց դիրքով կամ հարստութեամբ կուրացած՝ ժողովուրդը բանի տեղ չեն դներ, ժողովուրդին ձայնը և իրաւունքները կարհամարհեն. ազգ, ժողովուրդ, օրէնք, Սահմանադրութիւն իրենց համար նշանակութիւն չունին. իրենք ամէն բան են, ու օրէնք իրենց կամքն է: «Մենք մեծ մարդեր ենք, կրսեն, ազգին գործերը մեր ուզած կերպով պիտի կառավարենք. ժողովուրդը ո՞վ է որ համարձակի մեր գործերը քննադատելու, մեզ հաւնելու կամ չհաւնելու. մենք հովիւ ենք, ժողովուրդը ոչխար է. մենք զայն երկաթէ գաւազանով պէտք է կտռավարենք. մեզի գէմ ձայն ոչ հանէ՝ պէտք է գլուխը ճզմենք, եկեղեցին մենք շինեցինք,

գարոցը մենք հիմնեցինք, հողերը մենք ազգին տուինք, ինչպէս կուզենք՝ անանկ կը կարգադրենք»:

Իժարազարաչ այս քաղքիս մէջ ալ այս գլխուն տէր մարդեր կան, ու անոնց երկրպագութիւն ընողներ ալ պակաս չեն: Սահմանադրութիւնը ս'ըջափ որ այս երկրին մէջ գործադրուած է, տակաւին այդ կարգի մարդերուն և իրենց խնկարկուններուն համար անմարտելի է, և ամէն անգամ երբ առիթ գտնեն՝ Սահմանադրութեան տեղ իրենց կամայականութիւնները դնելու կազմու պատրաստ են: Ըսածս հաստատուելու համար ինկած Թաղական Խորհուրդին օրինակը բաւական է. քիչ մնաց իր հակասահմանադրական կազմութիւնը իբր օրինաւոր պիտի կլլեցընէր ժողովուրդին, ու իր առժառանգ հանգամանքին չի հայելով՝ առանց տեղ մը հարցնելու ազգին կալուածները ծախեց, և օրէնքին գործադրութիւնը պահանջողներուն իբր միակ պատասխան՝ Սեպտ. 1ին՝ եկեղեցին ոտիկաններ բերաւ:

Հիմա որ ժողովուրդի քուէներով Թաղական Խորհուրդ մը ընտրելը ա՛լ որոշուած է, պէտք է շանանք որ ժողովուրդը սիրով, օրէնքը յարգող մարդեր Թաղական ընտրուին. եթէ վերը բացատրածիս նման ժողովուրդը արհամարհողներուն, օրէնքին վրայ խնդացողներուն պիտի տանք մեր քուէն, կը հարցնեմ քեզի, բարեկամ, ի՞նչ պէտք կայ քուէարկութիւն ընելու:

Այն ամեն հայերը ոչ տարիէ մը ի վեր այս քաղքիս մէջ անցած դարձածին, տեղիս ազգային գործերու վիճակին, եզած վէճերուն, լրագիրներու մէջ գրուածներուն տեղեակ են, գիտեն արդէն թէ ի՞նչ տեսակ անձերու պէտք է տան իրենց քուէները. օրէնքին հակառակողները անոնցմէ յոյս մը չունին, անոր համար է որ

բոլոր յոյսերնին գրած են բանէսն տեղեակ ազգայիններուն վրայ, ազգային գործերու հետաքրքիր չեղողներուն ու լրագիր չը կարգացողներ վրայ, այս պատճառաւ քաղքին ամենէն մութ անկիւնները կը մանեն կը սլքտան ու քուէ կը մուրան նոյնիսկ բոլորովին անծանօթ անձերէ:

Այս ամենը գիտցի՛ր ու մի՛ խարուիր. քու քուէդ տալէ առաջ հարցո՛ւր, փնտո՛ւէ՛, ամեն բանէ տեղեկացի՛ր, անկէ վերջ արժանաւորներուն տո՛ւր քու քուէդ: Չգիտնալը ամօթ չէ՛, չի տղվի՛ ըն է ամօթ. չըլլայ որ քու սխալ քուէսովդ ազգին գործերուն գէշ երթալուն պատճառ ըլլաս. չըլլայ որ օրէնք չի յարգող, Սահմանագրութիւնը չի սիրող, ժողովուրդը աշխատարհող մարդերու տաս քու քուէդ:


Մի՛ մոռնար որ ֆռեստիդքիւնը ԳԱՂՏՆԻ է, այսինքն ո՛վ որո՛ւ քուէ տուած ըլլալը յայտնի չ'պիտի ըլլայ. ասո՛ր համար է որ մահմանագրութիւնը կ'արգիլէ քուէթղթերուն տակը ստորագրութիւն գնելը: նոյնպէս քուէն նամակով զրկողներուն պահարանի վրայ ստորագրութիւն գնելը միմիայն անո՛ր համար է որ նամակը չի բացուի ու խարդախութիւն չ'ըլլայ. իսկ եկեղեցւոյ մէջ պահարանը բացուած ժամանակը քուէն առանց կարգացուելու, անմիջապէս քուէտուփը պիտի ձգուի, ու միւս քուէներուն մէջ պիտի խառնուի. մարդ չ'պիտի գիտնայ թէ դուն որո՛ւն քուէ տուիր. ուստի, վախնալու կամ խաքրը ընելու բան մը չ'ունիս, ուրեմն նայէ՛ որ ո՛չ թէ քու վրագ ազգեցութիւն բանեցնողները ընտրես, այլ իրաւցնէ լաւ մարդեղը ընտրես:

Դեռ մէկ քանի օր ժամանակ ունիս մինչև կիրակի, ՄԻՆՉՆԻ ՎԵՐՉԻՆ ՎԱՅՐԿԵԱՆԸ՛ ԿԱՄՔԻԴ ՏԷՐՆ ԵՍ: Եթէ սխալմամբ կամ վախով կամ ո եւ է

ազգեցութեան ու թելագրութեան տակ արդէն քուէդ տուած ես այս կամ այն մարդուն ձեռքը, ու հիմայ կ'զգաս որ սխալած ես, կրնաս ետ առնել: նամակ մը կը գրես Ընտրող ժող. Արժ. նախագահին ու կ'ըսես թէ արդէն տուած քուէդ անընդունելի է և թէ դուն քու քուէդ կիրակի օրը անձամբ պիտի բերես քուէտուփին մէջ ձգես. ու անանկ ալ կ'ընես: Եթէ այդպէս ընելովդ այս կամ այն բարեկամիդ խաքրը պիտի կոտրես, հոգ չէ, ազգին գործերը անձնական բարեկամութիւններէ աւելի կարևոր են, ազգին շահերը մեր անձնական շահերէն վեր են. ու եթէ ազգին համար այսօր քան չնչին զոհողութիւն մ'ալ չ'ենք կրնար ընել, եթէ աշատ ու անկախ կեցւով մեր գաղտնի քուէն տալու չափ ալ քաջութիւն չունինք, ալ ի՞նչպէս կրնանք յուսալ որ մեր ազգային գործերը լաւ մարդերու ձեռքը պիտի անցնին ու կարգի պիտի մտնեն:

Քեզի վերջին խօսք մ'ալ. անսմայի մի՛ ըսեր. անպատճառ քուէդ տուր ու լաւ մարդերու տուր: Եթէ քուէդ չի տաս կամ եթէ առաջին հանգիպողին խօսքին հաւատալով անարժաններու տաս քու քուէդ, վերջէն մի՛ զարմանար թէ ինչո՞ւ ազգին գործերը գէշ կերթան. վերջէն մի՛ գանգատիր ուրիշներէն. առաջին յանցաւորը դո՛ւն ես որ ազգին հանդէպ ունեցած մէկ ամենատարրական պարտականութիւնդ ալ, որ միանգամայն իրաւունքդ է, կատարելու անընդունակ ես:

ԺՈՂՈՎՐԴԻՆ ԲԱՐԵԿԱՄ ՄԸ



ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆ Բ. ԴԻՐՔԸ պիտի սկսինք հրատարակել յաջորդ թիւով:

### ՔՐՈՆԻԿ

#### Ա.ՉԳ.Ա.ՅԻՆ

— ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ . — Պարսից Վեհ. Շահը ԱՌԻԻԾԻ և ԱՐԵՒՈՒ Գ. կարգի պատուանճանին հետ ՊէՅուրիւն շնորհած է քաղաքիս բարեհամբաւ վաճառական և հայ հասարակութեան երեւելի անդամներէն ՏԻԱՐ ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆՆԻ, որ Աղէփանդրիոյ Պարսկական հիւպատոսարանի դասաւորներէն է:

Կայսերական այս զնահասեմը գեղեցիկ առիթ մը կ'ընծայէ հրապարակաւ յայտնելու մեր արագին խրնդակցութիւնները ՎՍԵՄ. ՄԻՀՐԱՆ ՊէՅ ԳԱԼՅԱՆՆԻ, որ Եգիպտոսի հայ գաղթականութեան մէջ պատկառելի դիրք մը գրաւած է իր անձնական արժանիքովը ու յառաջդիմասէր ձգտումներովը, վայելելով Քաղաքիս գրեթէ բոլանդակ ազգայիններուն համակրանքն ու յարգանքը:

Ու կը սիրենք հաւասար թէ՛ Վեհ. Շահնեանի շնորհին ա՛յնքան իրաւամբ արժանացող այս պատուական Հայր՝ պիտի այսուհետեւ աւելի՛ եռանդով Եւրոնակէ գործնականապէս ցոյց տալու իր զնահատելի աջակցութիւնը տեղիս հասարակութեան բարգաւաճման սաստրող ամեն ազգագոյս ու ազնիւ ձեռնարկներու:

Եգիպտական բոլոր թերթերը հրատարակած են արդէն այս լուրը, գովելով առ հասարակ Վ.սեմ. Միհրան Պէյրփալճեանի բարեմասնութիւնները:

#### ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՅԵՂ. ԳՕՄԻԹԷՆ. Տ. Սարաճօճ, վիճակական ամսոյս 14 թուականով հեռագրի մը համեմատ,

Մեծ-Եպարփոսին իմացուցած է թէ՛ յեղ. ամեն ապստամբական փորձեր անմիջապէս պիտի դադրին եթէ Դուռը գործադրէ Մակեդոնիոյ մէջ խոսացուած բարեփոխումները:

Կ. ՊՈԼՍՈՅ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊՈՒՆԸ Տ. Չինովիճ, ամսոյս 13 թուականով հետ՝ ռապուրիտան հեռագրի մը համեմատ, պատճառական հրահանգներ ստացած է ազգու դիմումներ ընելու Դրանով. Մակեդոնիոյ վերջին խռովութեանց վերջ մը ղնել տալու և կարգն ու հանդարտութիւնը վերահաստատելու և ապահովելու համար:

ԱԼԲԱՆԻԱ կասարեալ անիշխանութիւն կը սիրէ. հակառակ Դրան ամեփոքեայ հեղուկներուն, որով Դուռը կը ջանայ Տէրութեանց ուշադրութիւնը հեռացնել երկրին մէջ գործուած խրճործանքներէն:

Ս. Բերսապուրիէ դարձեալ ուրիշ պատճառական հեռագիր մը, աւելի խիստ հրահանգներ կուտայ Տ. Չինովիճի, կրկնելու իր դիմումներն աւելի ազգու կերպով, և Դուռը ստիպելու որ անյապաղ վերջ մը ղնէ այդ երկրին անիշխանութեանը:

— ՉԵՐԲԱԿԱԼՈՒՄՆԵՐԸ Կ. Պոլսոյ մէջ վերջերս վսանգաւոր համեմատութիւն առին. քաղաքական ու զինուորական բարձրաստիճան պատճառներ կատարուին անձանօք տեղեր. մայրաքաղաքը յուզուած, Երլսրզ դողերու թունուած է:

#### Ա.ՉԴ

«ԱՅՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ» Ի ՎԻՃԱԿԱՆՀԱՆՈՒԹԻՒՆԸ տեղի ունեցաւ անցած կիրակի «ՆՈՐ ԳՎՐ» ճաշարանին մէջ:

17 Թիւր շահած է պարզաբար:

### ԹՂԹ ԱԿՅՈՒԹ ԻԻՆ

ԷՍԹ ՈՒԷՍԹԻ


Բարից Մարտ 3—10

ԵՐԿՈՒ ՀԱՅՆԵՐՈՒ ԳԱՏԱՍՏԱՆԸ, Անց'ալ շաբաթ օր, Մարտի 1ին, կէս օրէն վերջը՝ ժամը 12<sup>1/2</sup>ին, Բարիզի դատարանին առջեւ տեղի ունեցաւ, դարձեալ երկու հայերու դատասանը: Դատ քացոյր կամ գանգատողն էր պր. Ա. Զօպանեան, որ կ'ամբասանէր պ. Մ. Գալփաֆնեանն իւր վրայ զրպարտութիւններ քրած լինելուն համար: Պ. Մ. Գալփաֆնեան ըսած է եղեր քանի մը տեղեր եւ մանաւանդ ժողովի մը մէջ, թէ պ. Ա. Զօպանեան ազգային օգտին ծառայելիք հրատարակութեան մը մէջ, գոմար մը իւրացուցեր է:

Դատարանին առջեւ՝ պ. Գալփաֆնեան դարձեալ երկու անգամ իւրաւու վրայ կրկնեց իւր խօսքը եւ երդման ձեւով՝ դատաւորներուն ուղղելով ըսաւ. «Քրիստոսի եւ Սուրբ Հայրենիքիս անունով կ'երդնում որ պ. Ա. Զօպանեան գոմար մը շարժած է...» Այնտեղ գանազան թղթեր եւ վկայութիւններ քննուեցան եւ իւրաքանչիւր կողմի փաստաբանն իւր յանախօրդը պատշապանեց: Սակայն դատաւորները Պ. Մ. Գալփաֆնեանը դատապարտեցին 500 Ֆր. ի, որ նա վճարելու է պ. Ա. Զօպանեանին:

Յիշենք սակայն որ Պ. Գալփաֆնեան չ'դատապարտուեցաւ Պ. Զօպանեանի դրամ շարժած լինելն ամէն տեղ եւ ժողովին մէջ ըսած լինելուն համար — ի՛նչ որ արդէն դատաւորներու առջեւ ալ կրկնեց երդուելով — այլ որովհետեւ ասկէ քանի մը ամիս առաջ կատարուած ժողովի մի ժամանակ, ժողովականները յատուկ տոմսակով (*carte privée*) հրաւիրած է եղեր:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ԵՐԵՎՈՅԹԸ. Ժամանակին ըսինք թէ Բարիզի Բարեգործական Ընկերութիւնը կը պատաստուի երեկոյթ-պարահանդէս մը տալու. արդէն որոշուած էր որ այդ երեկոյթը տեղի ունենայ ամսույս 8ին, սակայն Վիկտոր Հիլիօի Հարիւրամեակին տօները՝ կարգ մը հայասէր ճեմանացի դերասաններու ներկայ գտնուելուն արգելք հանդիսանալով, Բարեգործական Ընկերութեան Դիւանը որոշած է երեկոյթը 15 օրուան չափ յետսաձգել, այդ յայտնի արդիւտներն անպատճառ ունենալու համար:



### ՆԱՄԱԿ ԳԱՀԻՐԷՆ

Գոսիթէ 4 Մարտ 1902

Մեծապատիւ Տ. Խնքազիր «Փիւնիկ» ազգանուէր Շաբաթաթերթի.

յԱղեփանդրիա

Այժմ Մայրաքաղաքումս՝ Ազգ. շրջանակում կը խաղացուի՝ միշտ նոյն փցնութեամբ, վարժուհիական ծանօթ կատակերգութեան երրորդ արարուածը (Այս վերջի՞նն է արդեօք):

«Փիւնիկ»ի ընթերցողաց ծանօթ լինելով սուաջին երկու արարուածներու նիւթը, յիշատակեմ համարտօսակի երրորդի ամփոփումը:

Այն ինչ վարժարանի Տնօրինուհին կը վերստանանէ իւր պատշտը, ահա կ'ամբաստանուի *պէշէսի* ծնողի մը կողմանէ թէ՛ իրենց տանուամեայ դուստրը չարաչար ծեծած, կամ ըս թերթի մը, *գանակոծած է* (ճ'հ, կարի է առասպելս, այլ եւ առասպելաց առասպել): Աղջկան հայրը գայն հազարով ի լուր աշխարհի հոչակել է եւ նոյն իսկ վարժարանի բակին մէջ նորեկ գաղթականաց նկատմամբ ոչ-վայելուչ լեզու գործածել է զկնի, որոնք,

կարծես թէ իւր նմաններու հացին արգելի հանդիսացած լինէին—սեսնելով որ ո՛ր եւ է շօշափելի գոհացում չստանար՝ Արդարութեան ու Ոստիկանութեան միջամտութեան կը դիմէ:

Թողնելով զնա իւր դերին մէջ՝ մենք հետեւեալ կէտերն յը ներկայենք չեզոք եւ ողջամիտ հասարակութեան արդար դասասանին:

Կարելի՞ է հաւասար թէ Տնօրինութիւն, որուն մտնում սակաւին այնքան քաւում են վերջերս իւր անձին շուրջ մղումը հակառակութիւններն ու քննահանոյցները որով ջանացած էին զինքն պաշտօնանկ ընել՝ այնքան ժպիտի գտնուի՝ եւ այն իւր վերահաստատման վաղորդայնը, որպէս զի հա՛յառակորդները զինք հարաւածելու առիթ ունենան, մանաւանդ որ իւր 6-7 ամեայ պաշտօնավարութեան միջոցին այսպիսի ոտնակներէ մը գերծ մնացած է:

Այս ամենուն անտեղեակ չի կարող լինել եւ ամբասանող հայրը, որպէս եւ այն քննական տնօրինութեան՝ որով պահ մը վարժարանի դռներն փակուած մնացին հակառակ ամէն իրաւացի, աւակերտութեաց սուտը, որպէս եւ իւր դստեր:

Եթէ յիշատի աղջիկն առարկուած պատիժն ընդունած է՝ ի՞նչպէս կը լինի որ վարժարանի պաշտօնեայք իսպառ կ'անգիտեն իրենց թիւն սակ անցած դարձածն, եւ եղելութիւնը մի քանի օր ետքը եւ այն եւս՝ օտարականէ մը կ'իմանան:

Ինչո՞ւ բոլոր աւակերտութիւնք բացասական պատասխան կուտան աղջկանն ո՛ր եւ է մարմնական պատիժ ընդունելուն նկատմամբ: Այո՛, միայն երեք հոգի հաստատապէս կը պատասխանեն. նշանակելի կէտ մը սակայն այս առթիւ, սոցանէ եւ յուրեք երեակայեալ ծեծի օրն դատընթացէն կը փայլին եղեր իրենց բացակայութեամբ, իսկ երբորդն՝ աղջկանը ասպա խոստովանած է որ

իւր հօրեղբոր սպառնալեաց վերայ նրբմարտութեան հակառակ վկայած է:

Միթէ աղջկան մայրն զնա առաջին անգամ վարժարան բերած օրն բոլոր աւակերտութեաց ներկայութեամբ հետեւեալ յայտարարութիւնն չէ՞ քրտած *«Եթէ աղջիկս ո՛ր եւ է շարտիքն գործէ, ի սեր Աստուծոյ հօրէն զաղջնիկ պահեցեմք, ԶԻ ՄԵՌՅՆԵԼՈՒ ԱՍՏԻՃԱՆ ԿԸ ԾԵԾԷ ԶՆԱ.»*

Պահ մի ընդունինք թէ՛ Տնօրինութիւն իւր խնամոց յանձնուած սան մի թերթիւրէն ծեծած է, միթէ վայելո՞ւչ է այս աստիճանն արմուկ հասնել մանաւանդ որ այսօր ոչ ոքին գաղտնիք մ'է այլեւս թէ այդ աղջիկն յառաջագոյն՝ օտար վարժարանէ մ'արձակուած է, եւ նոյն իսկ Օր. Մառիի օրով՝ Ազգայինէն. ա՛յնքան նախանձելի վարմունք ունեցած է որ . . . :

Վերեւ յիշածներս եւ այլ ուրիշ կէտեր, զորս մի առ մի յիշել խիստ երկար պիտի լինէր. կանխաւ անտեսուած կը բուին դասի գառաջինն դիմողներու կողմանէ. այժմ է միայն որ փրկարար ազդեցութիւն մը կը ներգործեն, մինչ խնդրոյն վերայ լրջօրէն կը խորհին եւ որոշակի կը տեսնեն որ դասի ելին իրենց նպաստաւոր չ'պիտի լինի: Այս մտածման կարելի է վերագրել աղջկան հօրեղբոր վերջերս գրաւորապէս քրտած դիմումն իւր եղբոր *խափականերու մօտ*, որոնք նորեկ գաղթականներ են, եւ որով կը խնդրէ իր եղբորը ետ կեցնել իսկ այն խորխորատէն ուր կը գահավիժի անգիտակցաբար, որպէս եւ այն *ինքնասեր* դիմումը, զոր քրտած է աղջկան հայրն Վսեմ. Եուսուժ Պէյ Ազիզի քով, եւ բախանձագին խնդրած Նորին Վսեմութենէն՝ միջամտել սոյն խնդրոյն բարեկամօրէն վախճանի տալու. չէ՞ մտնած նաեւ յաւելլալ եւ այն՝ վկաներու առաջ թէ՛ *Ասիական տղայ հոգաբարձուներէն ՄԻՌՅՆ զրդեան* վրայ է

որ վսեմ. Տիգրան Բաւաւային ուղղած է մի բողոքագիր:

Նորին վսեմութիւնն մեղծօրէն յի-  
ւեցուցած է սոյն հօր անցեալն, որ  
խիստ հեռի է վարդապոյն լինելէ, եւ  
զաղբականաց յանձնախմբում իր ն  
յանձնուած պատօտն, իր կարօս վի-  
նակին դարման մը ստնելու համար.  
«Այժմ որ, աւելցուցած է ուսեշու հաց  
ունիս, կը վաշեշէ՞, որ ուրիշի մի հա-  
ցիմ կտրուելուն աշխատիս պատճառ  
դառնայ, մանաւանդ քո դասեր վար-  
ժուելոյն: Ա լեւնուս պատկառանաց ար-  
ժանի է ուսուցչական մարմինը, որ  
կ'աշխատի մեր ապագայ սերնդեան  
հոգոյ քարճուաց խն եւ աշխուսցման,  
միշտ նախընտրելի այն ծնողներէն որ  
մեծաւ մասս կը մար էինը կ'անեցնեն.  
Միթէ կարո՞ղ ե՛մ մարել խնդիրն, քանի  
որ հետս լուս եղած ես խորեցնել հան-  
րային կարծիքն ուսուցչուհին անու-  
նարկելու հաւար, հանրային գայրոյ-  
րը գրգռել անոր դեմ եւ ջանայ զայն  
քանսարկել սայու: Եթէ խնդիրն ոչ-ե-  
ղե՞նական չի՛նք, կրնայի վերջապէս  
չո՞ծել... ինչպէս որ արդէն վարժուե-  
լոյն քանանաներէն միմ որկած ես՝  
անկէ ոսկի մը պահանջելու՝ դասէ  
ձեռնքալի չիներու հաւար, սակայն  
հիւսս խնդիրը հանրային է, որ մեզի  
չը վերաբերիր, աչ հանրային իշխա-  
նութեան:»

Յուսով եմ որ սոյն երբող սե-  
սարանի վարագոյրն ես պիտի իջնէ  
նեմարտութեան կատարեալ յաղթանա-  
կովը, որուն նայիմք ընդդիմախօսք պի-  
տի կրնա՞ն հանդուրժել:

ԽԱ.ՉՁ-ՁԱՆ

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

**ՏԻԱՐ ՏՕԳԴ. Մ. ԺԱՄԿՈՉ-  
ԵԱՆ** կը յայտարարէ արգոյ  
հասարակութեան թէ իր բնա-

կարանը փոխադրած է քաղա-  
քիս Մէնչիլէ Մեծ հրապարա-  
կին վրայ, Խառն դատարանին  
բովը, ԲԲԻՄԻներու ապարանքը,  
ու կ'ընդունի հիւանդներ ըստ  
առաջնոյն ամէն օր կէս օրէն  
ետքը ժամը 3-5:

**ՍՏԻՊՈՂԱԿԱՆ**

ՓԻԻՆԻԿԻ Բ. ՏԱՐԵՇԸՋԱՆԸ լրանալու  
մօտ է, բայց Եգիպտոսի ու Արտասահմանի  
մեր բաժանորդներէն շատերը դեռ չեն վճա-  
րած իրենց այս տարուան բաժանորդագրու-  
թիւնը:

Շարաթաթերթիս հրատարակութիւնն  
ու առաքումը կանոնաւորապէս շարունակել  
կ'ընալու համար կը խնդրուի որ մեր Պատ.  
Բաժանորդները հաճին փութով հասցնել  
իրենց բաժանորդագրիւր ՄԱՆՏԱԲՕՍԹՈՎ,  
մեր հասցէին.

**«ԱՐԱՔՍ»**

Հայկական տպարանը թէ՛  
հայերէն, թէ՛ գաղղիերէն եւ  
թէ՛ ուրիշ լեզուներով ամէն  
տեսակ տպագրական գործեր  
կը կատարէ մեծ խնամով եւ,  
ինչ որ նուազ կարեւոր չէ:

**ԽԻՍՏ ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ:**

**ԿԱՐԵԻՈՐ Ա.ԶԴ**

Միաց. Նահանգներուն Ռու-  
տըր քաղաքէն հայրենակից մը  
մտադիր ըլլալով հայերէնի  
թարգմանել տալ արաբերէն  
գիրք մը, կը փնտռէ այդ եր-  
կու լեզուներուն հաւասարա-  
պէս հմուտ եղող անձ մը, ո-  
րուն թարգմանչութիւնը բնա-

կանաբար պիտի վարձատրուի:  
Գիմել Փիհնիկի խմբագրատունը նամակ ղրկել թերթիս հասցէին՝

S. Burat, Rédaction Punig.  
Alexandrie (Egypte)

**ՏՕԳԹ. Ս. Վ. ԵԶԵԿԻԷԼԵԱՆ**

Ամերիկեան բժիշկ եւ վիրաբոյժ, մասնաւորապէս կը դարմանէ ջղային սկարուքիւնները ելեկսրականութեամբ, նաեւ կուրծքի, եւ նեքին գործարանաց հիւանդութիւնները: Աղբասներուն կը նայի ճիշտաբար: Առ այժմ կը բնակի «Rue el Caied Gohar» անուն փողոցին մէջ թիւ 24 սան 2րդ յարկը, Մօրէլի խանութին մօտը: Ժամերը 10-11 կէս օրէն առաջ, եւ 3-5 կէս օրէն յետոյ:

Յիշեալ Տօգթօրը նաեւ սարկներու ուսումնասիրութեամբ լիովին համոզուած ըլլալով թէ կարելի է առաջուրնէ որսել սեռի սեռակը ըստ կամայն ծնողք որ ու եւ է պատճառաւ նախամեծար կը համարին մանչ կամ աղ-

ջիկ գաւազ ունենալ, կրնան թէ՛ անձամբ եւ թէ՛ նամակաւ իրեն դիմել եւ այդ մասին ձեռք առած ամենապարզ եւ միանգամայն ամենագոհացուցիչ միջոցներէն օգտուիլ: Իր պայմանները դիրամասչելի են, եւ վարձատրութիւն չի պիտի պահանջուի ակնկալուած արդիւնք երեսան գալէ առաջ:

Նամակները պէտք է բովանդակեն նամակագրում, եւ ուղղութիւն հետեւեալ հասցէին. Dr. S. V. Ezekielian, Post. Restante, Alexandrie (Egypte):

**Գ. ԵՒ Ա. ԹՕԳԱԹԵԱՆ ԵՂԲԱՐԲ**

ԿԱԶԵՂԻՆԱՑ ՅԱՐԴԱՐԻԶԲ  
Tapissiers et décorateurs

Քաղաքիս երեսելի հայ տուներուն ծանօթ յանախորդ, կը պատրաստեն գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, եւն:

Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:  
Դիմել Աղղարին, Ռիւել-էլ-Զահապի, Attarine Ruelle-el-Zababy

**SALAMANDER**

**ՍԱԼԱՄԱՆՏԵՐ**

Ապահովագրական Ընկերութիւն ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Ծովային, Գետային և Ցամաքային փոխագրութեանց արկածներու դէմ:

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիսագօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱԵԱՆ

Աղեփսանդրիս, պզտիկ Մէնչիէ Ապուսարսա փողոց թիւ 10